ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ՝ հետևյալ ավտոբուսային երթուղիների համար.

Հ/Հ	ԵՐԹՈՒՂՈՒ			
	անվանումը և համարը	սկզբնակետը	վերջնակետը	սպասարկման համար պահանջվող հիմնական և պահուստային ավտոբուսների քանակը
1.	Գեղարքունիքի մարզի միասնական երթուղիներ (Սևանի, Գավառի և Ճամբարակի տարածաշրջաններ), որոնք ներառում են			Ընդհանուր՝ 60 հիմնական և 9 պահուստային միկրոավտոբուս
	ՍԵՎԱՆ-ԳԱԳԱՐԻՆ ԹԻՎ 1	ՍԵՎԱՆ	գ. ԳԱԳԱՐԻՆ	2 միկրոավտոբուս
	ՍԵՎԱՆ-ՍԵՄՅՈՆՈՎԿԱ ԹԻՎ 2	գ. ՍԵՄՅՈՆՈՎԿԱ	ՍԵՎԱՆ	2 միկրոավտոբուս
	ՍԵՎԱՆ-ՑԱՄԱՔԱԲԵՐԴ-ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶԻ ԹԻՎ 3	ՍԵՎԱՆ	ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶԻ	1 միկրոավտոբուս
	ՆՈՐԱՇԵՆ-ՍԵՎԱՆ ԹԻՎ 4	գ. ՆՈՐԱՇԵՆ	ՍԵՎԱՆ	1 միկրոավտոբուս
	ԼՃԱՇԵՆ-ՍԵՎԱՆ-ՎԱՐՍԵՐ ԹԻՎ 5	գ. ԼՃԱՇԵՆ	ՎԱՐՍԵՐ	2 միկրոավտոբուս
	ԳԱՎԱՌ-ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԹԻՎ 1	ԳԱՎԱՌ	գ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	8 միկրոավտոբուս
	ԳԱՎԱՌ-ԾԱՂԿԱՇԵՆ ԹԻՎ 2	ԳԱՎԱՌ	գ. ԾԱՂԿԱՇԵՆ	2 միկրոավտոբուս
	ԳԱՎԱՌ-ՍԱՐՈՒԽԱՆ ԹԻՎ 3	ԳԱՎԱՌ	գ. ՍԱՐՈՒԽԱՆ	1 միկրոավտոբուս
	ՆՈՐԱՏՈՒՍ-ԳԱՎԱՌ,ԹԻՎ 4	գ. ՆՈՐԱՏՈՒՍ	ԳԱՎԱՌ	3 միկրոավտոբուս
	ԾՈՎԱԶԱՐԴ-ԳԱՎԱՌ ԹԻՎ 5	գ. ԾՈՎԱԶԱՐԴ	ԳԱՎԱՌ	2 միկրոավտոբուս
	ԴՐԱԽՏԻԿ-ՃԱՄԲԱՐԱԿ ԹԻՎ 1	գ. ԴՐԱԽՏԻԿ	ՃԱՄԲԱՐԱԿ	1 միկրոավտոբուս
	ԾԱՓԱԹԱՂ-ՃԱՄԲԱՐԱԿ ԹԻՎ 2	գ.ԾԱՓԱԹԱՂ	ՃԱՄԲԱՐԱԿ	2 միկրոավտոբուս
	ԱՆՏԱՌԱՄԵՋ-ՃԱՄԲԱՐԱԿ ԹԻՎ 3	գ. ԱՆՏԱՌԱՄԵՋ	ՃԱՄԲԱՐԱԿ	1 միկրոավտոբուս
	ԿԱԼԱՎԱՆ-ՃԱՄԲԱՐԱԿ ԹԻՎ 4	գ. ԿԱԼԱՎԱՆ	ՃԱՄԲԱՐԱԿ	1 միկրոավտոբուս
	ՎԱՀԱՆ-ՃԱՄԲԱՐԱԿ ԹԻՎ 5	գ. ՎԱՀԱՆ	ՃԱՄԲԱՐԱԿ	1 միկրոավտոբուս
	ՃԱՄԲԱՐԱԿ-ԵՐԵՎԱՆ ԹԻՎ 301	ՃԱՄԲԱՐԱԿ	ԵՐԵՎԱՆ	3 միկրոավտոբուս

	ԳԱՎԱՌ-ԵՐԵՎԱՆ ԹԻՎ 303	ԳԱՎԱՌ	ԵՐԵՎԱՆ	12 միկրոավտոբուս
	ՍԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ ԹԻՎ 304	ՍԵՎԱՆ	ԵՐԵՎԱՆ	12 միկրոավտոբուս
	ՍԵՎԱՆ-ՀՐԱԶԴԱՆ ԹԻՎ 307	ՍԵՎԱՆ	ՀՐԱԶԴԱՆ	2 միկրոավտոբուս
	ՍԵՎԱՆ-ԳԱՎԱՌ ԹԻՎ 308	ՍԵՎԱՆ	ԳԱՎԱՌ	1 միկրոավտոբուս

Ց Ա Ն Կ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ՝ N 2 ձևի:

2.* Ավտոբուսների գրանցման վկայագրեր (ժամանակավոր կտրոն):

3.*Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

4.* Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:

5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր, գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:

6. Ավտոկայարանային ծառայություն մատուցող կազմակերպության հետ կնքված սպասարկման նախնական, իսկ ներհամայնքային փոխադրումների դեպքում երթակարգավարական ծառայություններ մատուցող կազմակերպության հետ կնքված ծառայություններ մատուցելու նախնական պայմանագիր (գործող պայմանագրի առկայության դեպքում նախնական պայմանագիր չի պահանջվում):

7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրավարձը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների (սույն պահանջը չի վերաբերում համայնքներում անցկացվող մրցույթներին):

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

Փաթեթների բացման օրը, ժամը և վայրը՝ 2024 թվականի հունիսի 24-ին, ժամը 12:00 հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը՝ 2024 թվականի հունիսի 28-ին, ժամը՝ 14:00, գ. Վերին Պտղնի, Երևան-Սևան ավտոմայրուղի, 2/14 շենք:

Հայտը ներկայացնելու օրը, ժամը, վայրը և վերջնաժամկետը՝ հայտերը պետք է ներկայացվեն մինչև 2024 թվականի հունիսի 21-ը ժամը 17:00 հետևյալ հասցեով՝ ք Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար՝ 010 511 356:

***Չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում:**

Էլեկտրոնային փոստի հասցեն՝ mtai.secretariat@gmail.com

Երթուղիների չվացուցակները ներկայացված են հետևյալ հղումով՝ https://www.mtad.am/pages/timetables?file=panel7151

Մրցույթին ներկայացվող ավտոբուսների ընդհանուր թվի առնվազն 10%-ը պետք է հարմարեցված լինի հաշմանդամների (տեղաշարժվելու, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց) նստեցման և իջեցման համար:

Մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջների համաձայն:

Հայտ-պարտավորագրով մասնակցելու դեպքում Կարգի 22.1 կետի պահանջներին համապատասխան մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը պետք է ստորև նշված հաշվեհամարին մինչև 2024 թվականի հունիսի 27-ը ժամը 12:00 փոխանցեն սահմանված քանակով ավտոբուսների ընդհանուր արժեքի 2.5 տոկոսին համարժեք գումար՝

Հ/Հ 900008000730